

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

1. Հրատարակութիւն «Արշալոյս»-ի № 1. Մարդ. թարգմ. Մ. Վ. Բաբու 1905

Կար ժամանակ, երբ մարդիկ պահանջում էին, որ հոգե-
ւորականներն իդէալական անհատներ լինէին. հոգեւորականը
պէտք է լինէր բարեբարոյ, ամբողջ գլխով ժողովրդից բարձր,
ամենքի կարեկիցը, ամենքին օգնողը, ամենքի փոխարէն գոհ-
ուողը, մի խօսքով հոգեւորականը պէտք է ազատ լինէր մարդ-
կային թերութիւններից ու կրքերից: Այժմ հարկաւ այս պահանջ-
ները շատ են չափաւորուել և ժողովուրդը գոհ կլինի, եթէ
հոգեւորականը լինի կրթուած և իւր պարտաւորութիւնները ճա-
նաչող անձնաւորութիւն:

«Մարդ» փոքրիկ զրոյցի հեղինակը—Մօրիս Լըմենսիէ—
հոգեւորականի վրայ նայել է վերոյիշեալ տեսակէտով և մի գիւ-
ղական քահանայի դարձրել՝ անձնագոհութեան իդէալ: Փրանս-
պրուսական պատերազմի ժամանակ Փրանսիայի մի գիւղի ազատ
հրացանակիրները սպանուած են գերմանական զօրքից երեք զի-
նուոր. զօրաբաժնի հրամանատարը սպանուած զինուորների
վրէժը լուծելու համար վճռում է երեք գիւղացի հրացանի բռ-
նել: Այս գիւղացիներից մէկի կէնը մանր զաւակների տէր լի-
նելով՝ լուսահատութեամբ ընկնում է ծխատէր քահանայի
ոտքերը և օգնութիւն աղբրսում: Քահանան վճռում է ան-
պատճառ մահից ազատել այդ գիւղացուն և հրամանատարին
ներկայանալով՝ առաջարկում է. «ես ոչ կին և ոչ էլ զաւակներ
ունեմ, ինձ վերցրէք նորա փոխարէն»: Դաժան հրամանատարն
ընդունում է պայմանը և հետեւեալ օրն անձնագոհ քահանան
հրացանի է բռնւում:

Այս ինքնըստինքեան համակրելի զրոյցի բովանդակութիւնն
է այլանդակել մի ինչ որ Մ. Վ. և հրատարակել հաւանօրէն
ոչ «Արշալոյս» թերթը: Զարմանալի է, որ գտնւում են այս-
պիսի անպէտք թարգմանութիւնները հրատարակողներ. թար-
գմանողի հայերէն չիմանալը և գրքոյկի տպագրական խայտա-
ռակ սխալները միասին՝ բոլորովին նսեմացնում են նիւթի
արժէքը: Ահա Մ. Վ.-ի հայերէնը. «Նա որ այդ հօտի համար
երբէք չէր խնայել իւր անձը՝ նոյն իսկ կեանքն զոհաբերու-
թեան չափով» (?) էջ 4: «Ահեղ (?) տեսակցութեան միտքը,
նորան սարսուռ էր ազդում, բայց քահանայի հոգեկան դրու-
թիւնը շուտով յաղթանակեց իրեն ընկճող սարսափը» (?)
էջ 5: «Շատ ցաւալի է, որ ձեր գիւղը ապաստանարան է ե-
ղել Աստուծոյ համար» (?!!) էջ 5: «Կարող էք արդեօք, պ.

Կիրէ, ամենամեծ յարգանքի արժանանալ ձեր կողմից» (?!) էջ. 7: Շնորհա աչքերի առաջ տարածուած փուռութիւնը արեւի շողերի մէջ շաղախուած զով կրակը» (?!) էջ 11.: Միջբան մանր ուրախութիւններ կային նորա երջանիկ ապրուստի մէջ, որ չէր վրդովուած ոչ խռովայոյզ ցանկութիւններով և ոչ փառասիրական ձգտումներով,— քահանայական, եկեղեցական պաշտպան պարտաւոր էր, թշուառներին մխիթարութեամբ, եղբայրական սեղան, ընդանի կենդանիների հոգս ու խնամք, պարտեղի հոգատարութիւն...» էջ 12: (Ով այս նախադասութիւնը կարողանայ վերլուծել, պ. Մ. Վ.-ից հարկը «մարդ» պարզ և կտրանայ): Լաւ կլինէր, որ թարգմանողը փոխանակ իշին «ապառ» (?) ուտացնելու և նրա «Թաւապալատ» դունչը շոյելու («Տիրողը տեսնելով, տառնակը թողեց ապառ ուտելն ու մօտեցաւ նորան: Քահանան... սկսեց շոյել նորա տաքուց (?) Թաւապալատ դունչը...» (էջ 9) մի փոքր մտածէր քարեխղճութիւն ասուած բանի մասին և ապա թէ հրատարակութեան տար վերոյիշեալ գոհարները:

2. Մ. Յ. Ջիւն. Հնչակ (ղտակահան նուէր 8-ցի գաղթականներին): Մ. Գե. տերրուր 1905 էջ 25.

Օտարասիրութիւնը հայի հին ցաւերից մէկն է. հայը թէ իւր բնիկ երկրում և թէ մանաւանդ հայրենիքից դուրս, միշտ սիրում է զարգարուել օտարի փեսուներով. նա՛ ճանկաստանում թրքախօս է, Ռուսաստանում ռուսախօս, Վրաստանում վիրախօս և այլն: Ոմանք այս տիտուր երևոյթը բացատրում են հայի ընդունակութեամբ, որ հեշտութեամբ իւրացնում է ուրիշ օտար լեզուներ և այդպիսով բարւոքում իւր տնտեսական դրութիւնը. հազիւ թէ ճիշտ լինի այս տեսակէտը: Եթէ այդպէս լինէր՝ օտար լեզուներ իւրացնելով, հայը չպէտք է մոռացութեան տար իւր մայրենի լեզուն ու գրականութիւնը. հայը հայի հետ օտար լեզուով չպէտք է խօսէր, իւր զաւակներին օտար կրթութիւն չպէտք է տար: Ծշմարտութեան աւելի մօտ կլինենք, եթէ հայի օտարասիրութեան պատճառը համարենք ինքնաճանաչութեան թերի զարգացումը, ազգային գիտակցութեան անկատար ըմբռնումը և արտաքին հանգամանքներին շուտով յարմարուիլը—նոյն իսկ եթէ սրանք կործանիչ սաղմերուն են հայութեան համար: Որտեղ որ հայի օտարասիրութիւնը հասել է օտարամոլութեան՝ հայութիւնը ջնջուել է և միմիայն հայանուն տապանաքարերն են մնացել. սրանք էլ հետզհետէ անյայտանում են: Խելացի և իսկապէս ընդունակ ազգերն օտար